

Հավելված N1
ՀՀ կառավարության 2015 թվականի
դեկտեմբերի 3-ի N 1456 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում պարենային ապահովման հետ կապված հարաբերությունները:

2. Պարենային ապահովման չափաքանակներով սահմանված սննդամթերքի տրամադրման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները հատկացվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

3. Պարտադիր ժամկետային զինծառայողները, ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտները, ռազմամարզական վարժարանների սաները, ուսումնական հավաքների կանչված բարձրագույն ուսումնական հաստատությունների զինվորական պատրաստություն անցնող ուսանողները, անհատական կարգով կամ զինվորական ջոկերով (ստորաբաժանումներով) ժամանակավորապես այլ զորամասեր ժամանելու դեպքում սննդով ապահովվում են տվյալ զորամասի շարքային կազմի պարտադիր ժամկետային զինծառայողների համար նախատեսված չափաքանակներով:

4. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի գերատեսչական պահպանության աշխատողներն ապահովվում են սննդամթերքով՝ ըստ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողների սննդի օրական չափաքանակների:

5. Ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտներն ուսումնառության ամբողջ ընթացքում (մինչև արձակման օրը ներառյալ) ապահովվում են անվճար սննդով:

6. Սպայական կոչում չունեցող, սակայն պահեստազորի սպայական կազմում հաշվառված զինապարտները զորամասերում հավաքների ժամանակ պարենային ապահովում ստանում են տվյալ զորամասի զինծառայողների համար նախատեսված չափաքանակով:

7. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ անմիջականորեն սահմանում ծառայություն անցնող կամ օդանավակայաններում, փորձադաշտերում, տեխնիկական և մեքենաթոփչային կայաններում մշտապես աշխատող սպայական, ենթասպայական և շարքային կազմերի պայմանագրային զինծառայողները, քաղաքացիական անձնակազմը, որոնց սնունդն ապահովվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին, իրենց հասանելիք օրապահիկներն ստանում են զորամասերի

ճաշարաններում պատրաստի ճաշատեսակներով, կամ նման հնարավորության բացակայության դեպքում՝ բնամթերքով (առձեռն):

8. Պարտադիր ժամկետային զինծառայողները պարենային բավարարում ստանում են զորամասերի ճաշարաններում:

9. Տարբեր չափաքանակներով սննդամթերք ստացող զորամասերի և ստորաբաժանումների զինծառայողները սննդով ապահովվում են մեկ ընդհանուր չափաքանակով, եթե նրանց տեղաբաշխման պայմանների կամ առաջադրանքի կատարման պատճառով սննդի առանձնացված պատրաստումը հնարավոր չէ: Սպայական և ենթասպայական պաշտոններում նշանակված ավագները (պարտադիր ժամկետային զինծառայողներ) սննդով ապահովվում են տվյալ զորամասի պարտադիր ժամկետային զինծառայողների պարենային օրապահիկների չափաքանակներով:

10. Հայաստանի Հանրապետության զինված ուժերում պարենային ապահովում ստացող անձինք, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, իրավունք ունեն օրական ստանալու միայն իրենց հասանելիք մեկ պարենային չափաքանակը:

11. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին լրիվ անվճար ուղեգրերով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության առողջաբաններում բուժվող կամ հանգստյան տներում գտնվող սպայական և ենթասպայական կազմերի զինծառայողներին, պարտադիր և պայմանագրային ծառայողներին, ինչպես նաև քաղաքացիական անձնակազմին, որոնք ունեն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին պարենային օրապահիկ ստանալու (սնվելու) իրավունք, ծառայության վայրում օրապահիկ չի հատկացվում: Ռազմաբժշկական հիմնարկներում, առողջաբաններում և հանգստյան տներում նրանք պարենով ապահովվում են պարենային վկայականների հիման վրա՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 3-ի N 1456 - Ն որոշման N 5 հավելվածի: Պարենային վկայականները տրվում են համապատասխան զորամասի կողմից:

12. Թույլատրվում է 190 սմ և ավելի բարձր հասակ ունեցող զինծառայողներին հատկացնել լրացուցիչ սնունդ՝ նրանց համար նախատեսված չափաքանակների կիսով չափ: Մսնդի հավելումը նշանակվում է զորամասի հրամանատարի հրամանով, կայագորային ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

13. Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զորամասերում ու ստորաբաժանումներում ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտները գործնական պարապմունքների և ստաժավորման ժամանակ սնվում են սննդի այն չափաքանակներով, որոնցով ապահովվում է տվյալ զորամասի (ստորաբաժանման) անձնակազմը:

14. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի սպայական, ենթասպայական, շարքային կազմերի պայմանագրային զինծառայողների և բանվոր ծառայողների լրացուցիչ վճարովի սնունդը կազմակերպվում է նման ցանկություն հայտնած

զինծառայողների զեկուցագրերի հիման վրա (նշելով, թե քանի անգամ և ամսվա որ օրերին են սնվել ցանկանում)՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի կողմից սահմանված կարգով:

15. Թույլատրվում է դիտելի սնունդ կազմակերպել սպայական, ենթասպայական և շարքային կազմերի պայմանագրային զինծառայողների համար՝ համապատասխան գորամասի բժշկական ծառայության պետի եզրակացության հիման վրա:

16. Ելնելով ծառայողական անհրաժեշտությունից՝ պետության հաշվին (անվճար) կերակրվելու անհրաժեշտություն ունեցող գորամասերի և դրանց անձնակազմերի անդամների թվի տվյալները հաստատվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամաններով:

Չ Ա Փ Ա Ք Ա Ն Ա Կ Ն Ե Ր

ԽԱՂԱՂ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ

N 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԻՆԾԱՅՈՂՆԵՐԻ ՄՆՆԴԻ ՕՐԱԿԱՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ

NN ը/կ	Անվանումը	Մեկ մարդուն օրական հասանելիք մթերքի քանակը (գրամ)	Ծանոթագրություն
1	2	3	4
1.	Հաց՝ ցորենի ալյուրից, 1-ին տեսակի	650	
2.	Ալյուր՝ ցորենի, 1-ին տեսակի	10	
3.	Զավարեղեն՝ տարբեր	120	
4.	Մակարոնեղեն	40	
5.	Միս՝ ոսկրոտ	175	
6.	Զուկ՝ սառեցված, առանց գլխի	100	
7.	Կենդանական ճարպ, մարգարին	20	
8.	Բուսական յուղ (ձեթ)	20	
9.	Կարագ՝ սերուցքային	20	
10.	Հալած պանիր	30	
11.	Խտացրած կաթ՝ շաքարով	20	
12.	Հավի ձու (շաքարովա ընթացքում)	4 հատ	
13.	Շաքարավազ	60	
14.	Կերակրի աղ	20	
15.	Թեյ	1	
16.	Դափնու տերև	0,1	
17.	Պղպեղ՝ կարմիր	0,2	
18.	Պղպեղ՝ սև	0,2	
19.	Քացախ	1	
20.	Տոմատի մածուկ	6	
21.	Կետչուպ	20	
22.	Կարտոֆիլ	600	
23.	Կաղամբ	130	

1	2	3	4
24.	Գազար	50	
25.	Բազուկ	30	
26.	Գլուխ սոխ	50	
27.	Օշարակ	28	
28.	Թարմ լոլիկ կամ վարունգ	40	Հատկացվում է հուլիս-սեպտեմբեր ամիսներին:
29.	Չորացրած կանաչի՝ տարբեր	0.5	
30.	Խնձոր	100	Հատկացվում է օգոստոս-նոյեմբեր ամիսներին:
31.	Մուրաբա	20	Հատկացվում է հոկտեմբեր-ապրիլ ամիսներին:
32.	Մարինադ	40	Հատկացվում է դեկտեմբեր-հունվար ամիսներին:
33.	Վիտամին C	1	Հատկացվում է ապրիլի 15-ից մինչև հունիսի 15-ը:

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին N 1 չափաքանակներով ապահովվում են՝

1) պարտադիր ժամկետային զինծառայողները.

2) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նախարարության) համակարգի սպայական, ենթասպայական և շարքային կազմերի պայմանագրային զինծառայողները, ովքեր ծառայություն են անցնում անմիջականորեն պետական սահմանի վրա կամ մշտապես աշխատում են օդանավակայաններում, փորձադաշտերում, տեխնիկական և մեկնաթիչքային կայաններում, զբաղվելով ինքնաթիռների, ուղղաթիռների անմիջական սպասարկմամբ.

3) ելնելով ծառայողական անհրաժեշտությունից՝ պետության հաշվին (անվճար) կերակրվելու անհրաժեշտություն ունեցող զորամասերի և դրանց անձնակազմերի անդամների թվի տվյալները հաստատվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամաններով.

4) այն զինծառայողները, ովքեր գտնվում են կարգապահական վաշտերում.

5) զինապարտները՝ վարժական հավաքների, հրամանատարաշտաբային կամ շտաբային վարժանքների և զորախաղերի, ինչպես նաև ուսանողները՝ ուսումնական հավաքների ժամանակ.

6) հաստիքային նվազախմբի սաները.

7) զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիները՝ զորամաս մեկնելու համար հավաքակայան ներկայանալու օրվանից.

8) զինկոմիտեներից և հավաքակայաններից զինվորական հոսպիտալներ բժշկական հետազոտման ուղարկվող քաղաքացիները.

9) զինված ուժերի հոգևոր ծառայողները.

10) սպայական, ենթասպայական և շարքային կազմի պայմանագրային զինծառայողները, բանվոր ծառայողները՝ զորավարժությունների անցկացման ժամանակ, եթե այդ ժամանակամիջոցի համար լրացուցիչ հավելյալ վարձատրություն չի տրվում:

2. Ծովի մակերևույթից 2000 մետր և ավելի բարձր տեղաբաշխված գորանասների զինծառայողներին, բացի N 1 չափաքանակներից, լրացուցիչ հատկացվում են՝

- | | |
|-------------------------------------|----------|
| 1) կիսաապխտած կամ ապխտած երշիկեղեն՝ | 70 գրամ. |
| 2) ճարպ (սալ)՝ | 20 գրամ. |
| 3) թխվածքաբլիթ՝ | 40 գրամ. |
| 4) խտացրած կաթ՝ շաքարով՝ | 20 գրամ: |

3. Պատվո պահակային վաշտում ծառայող զինծառայողներին, բացի N 1 չափաքանակներից, լրացուցիչ հատկացվում են՝

- | | |
|-------------------------------------|-----------|
| 1) միս՝ տավարի, խոզի՝ ոսկրոտ, հավի՝ | 100 գրամ. |
| 2) կարագ՝ սերուցքային՝ | 10 գրամ. |
| 3) խտացրած կաթ՝ շաքարով՝ | 15 գրամ: |

4. Հաստիքային երաժշտական խմբերում ծառայություն անցնող պարտադիր ժամկետային զինծառայողներին (շարքայիններին), բացի N 1 չափաքանակներից, լրացուցիչ հատկացվում են՝

- | | |
|--------------------------|----------|
| 1) խտացրած կաթ՝ շաքարով՝ | 20 գրամ. |
| 2) կարագ՝ սերուցքային՝ | 15 գրամ. |
| 3) շաքարավազ՝ | 10 գրամ: |

5. Այն պարտադիր ժամկետային զինծառայողներին (շարքայիններին), ովքեր աշխատում (ծառայում) են թունավոր բաղադրամաս պարունակող վառելիքի առկայությամբ, բացի N 1 չափաքանակներից, լրացուցիչ հատկացվում են՝

- | | |
|-------------------------------------|----------|
| 1) միս՝ տավարի, խոզի՝ ոսկրոտ, հավի՝ | 55 գրամ. |
| 2) կարագ՝ սերուցքային՝ | 25 գրամ. |
| 3) խտացրած կաթ՝ շաքարով՝ | 20 գրամ: |

6. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի և Արմենակ Խանիբեդյանցի անվան ռազմական ավիացիոն ինստիտուտի կուրսանտներին, բացի N 1 չափաքանակներից, լրացուցիչ հատկացվում է 10 գրամ սերուցքային կարագ:

7. Բանակի մարզիկների կենտրոնական ակումբի մարզիկներին, բացի հիմնական չափաքանակից, լրացուցիչ հատկացվում են՝

- | | |
|--------------------------|---------------------|
| 1) շաքարավազ՝ | 35 գրամ. |
| 2) կարագ՝ սերուցքային՝ | 15 գրամ. |
| 3) հավի ձու՝ | 10 հատ (շաքաթական). |
| 4) հալած պանիր՝ | 30 գրամ. |
| 5) բնական սուրճ՝ | 5 գրամ. |
| 6) խտացրած կաթ՝ շաքարով՝ | 60 գրամ. |
| 7) օշարակ՝ | 28 գրամ: |

8. Չափաքանակով հասանելիք կարագը և հալած պանիրը չեն տրվում, իսկ մյուս սննդամթերքը տրվում է N 1 չափաքանակների համաձայն:

9. Հայաստանի Հանրապետության հյուսիսում (Օմարի տարածաշրջան) տեղաբաշխված զորամասերում ծառայություն անցնող զինծառայողներին նոյեմբերի 15-ից մինչև ապրիլի 15-ը ներառյալ, բացի NN 1 և 6 չափաքանակներից, լրացուցիչ հատկացվում են՝

- | | |
|--------------------------|----------|
| 1) սխտոր՝ | 10 գրամ. |
| 2) ճարպ (սալ)՝ | 50 գրամ. |
| 3) թեյ՝ | 1 գրամ. |
| 4) ջեմ՝ | 45 գրամ. |
| 5) խտացրած կաթ՝ շաքարով՝ | 30 գրամ: |

10. «Փամբակ» լեռնաուսումնական կենտրոնում լեռնային պատրաստականության պարապմունքներ անցնող զինծառայողներին լրացուցիչ հատկացվում են՝

- | | |
|-----------------|----------|
| 1) ձկան պահածո՝ | 40 գրամ. |
| 2) խտացրած կաթ՝ | 20 գրամ: |

11. Հատուկ հետախուզական ստորաբաժանումներում ծառայություն անցնող զինծառայողներին լրացուցիչ հատկացվում են՝

- | | |
|---------------------------------|----------|
| 1) կիսաապխտած կամ ապխտած երշիկ՝ | 40 գրամ. |
| 2) խտացրած կաթ՝ | 20 գրամ: |

12. Գիշերային պահակային ծառայություն իրականացնող (ժամը՝ 00.00–06.00) զինծառայողներին լրացուցիչ հատկացվում են՝

- | | |
|---------------|-----------|
| 1) թեյ՝ | 0,5 գրամ. |
| 2) շաքարավազ՝ | 15 գրամ: |

**N 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄՆՆԴԻ ՕՐԱԿԱՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ**

1-ին տարբերակ

NN ը/կ	Անվանումը	Մեկ մարդուն օրական հասանելիք մթերքի քանակը (գրամ)
1	2	3
1.	Այլուր՝ 1-ին տեսակի (հացի փոխարեն)	568
2.	Ձավարեղեն՝ տարբեր	150
3.	Մակարոնեղեն	20
4.	Մսի պահածո	113
5.	Մսաբուսական պահածո՝ տարբեր	308
6.	Արագ պատրաստվող կիսաֆաբրիկատ (1-ին ճաշատեսակի համար)	20
7.	Բուսական յուղ (ծեթ)	25.5
8.	Խտացրած կաթ՝ շաքարով	20
9.	Շաքարավազ	130
10.	Կերակրի աղ	20
11.	Թեյ	1.6
12.	Դափնու տերև	0.1
13.	Տոմատի մածուկ	6

1	2	3
14.	Կարտոֆիլ	200
15.	Գլուխ սոխ	50
16.*	Բուսական յուղ (ձեթ)	1.2
17.*	Թթխմոր	3
18.*	Կերակրի աղ	10

2-րդ տարբերակ

NN ը/կ	Անվանումը	Մեկ մարդուն օրական հասանելիք մթերքի քանակը (գրամ)
1.	Այլուր՝ ցորենի, 1-ին տեսակի (հացի փոխարեն)	568
2.	Ձավարեղեն՝ տարբեր	260
3.	Մակարոնեղեն	40
4.	Մսի պահածո	202.25
5.	Կենդանական յուղ, մարգարին	40
6.	Կարագ՝ սերուցքային	20
7.	Խտացրած կաթ՝ շաքարով	20
8.	Շաքարավազ	129
9.	Կերակրի աղ	20
10.	Թեյ	1.6
11.	Դափնու տերև	0.1
12.	Տոմատի մածուկ	6
13.	Կարտոֆիլ	150
14.	Գլուխ սոխ	50
15.*	Արևածաղկի ձեթ	1.2
16.*	Թթխմոր	3
17.*	Կերակրի աղ	10

1. *Սույն չափաքանակների արևածաղկի ձեթը, թթխմորը և կերակրի աղը հատկացվում են զինվորական դաշտային մեխանիզացված հացի գործարաններին՝ հացաթխման համար, իսկ քաղաքացիական հացի գործարաններին հատկացվում է միայն այլուր:

2. Պետության հաշվին սննդի տվյալ չափաքանակով ապահովվում է պատերազմական գործողությունների մասնակցող ամբողջ անձնակազմը:

ՈՅ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕԴԱՉՈՒՆԵՐԻ ՄՆՆԴԻ ՕՐԱԿԱՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ

NN ը/կ	Անվանումը	Մեկ մարդուն օրական հասանելիք մթերքի քանակը (գրամ)	Ծանոթագրություն
1	2	3	4
1.	Հաց՝ ցորենի այլուրից, 1-ին տեսակի	650	
2.	Այլուր՝ ցորենի, 1-ին տեսակի	10	
3.	Ձավարեղեն՝ տարբեր	80	
4.	Բրինձ	30	
5.	Մակարոնեղեն	40	
6.	Միս՝ տավարի, խոզի՝ ոսկրոտ	300	
7.	Միս՝ հավի	50	

1	2	3	4
8.	Կիսաապխտած կամ ապխտած երշիկեղեն	25	
9.	Ձուկ՝ սառեցված, առանց գլխի	100	
10.	Կենդանական ճարպ, մարգարին	20	
11.	Բուսական յուղ (ձեթ)	20	
12.	Կարագ՝ սերուցքային	60	
13.	Հալած պանիր	30	
14.	Խտացրած կաթ՝ շաքարով	70	
15.	Թթվասեր	30	
16.	Կաթնաշոռ	30	
17.	Հավի ձու	1 հատ (օրական)	
18.	Բնական սուրճ	2.5	
19.	Շաքարավազ	80	
20.	Կերակրի աղ	30	
21.	Թեյ	1.2	
22.	Դափնու տերև	0,1	
23.	Պղպեղ՝ կամիր	0,2	
24.	Պղպեղ՝ սև	0,2	
25.	Քաջախ	1	
26.	Տոմատի մածուկ	6	
27.	Կետչուպ	20	
28.	Կարտոֆիլ	600	
29.	Կաղամբ	130	
30.	Գազար	50	
31.	Բազուկ	30	
32.	Գլուխ սոխ	50	
33.	Մարինադ	40	Հատկացվում է դեկտեմբեր-հունվար ամիսներին:
34.	Թարմ լոլիկ կամ վարունգ	40	Հատկացվում է հուլիս-սեպտեմբեր ամիսներին:
35.	Չորացրած կանաչի՝ տարբեր	0.5	
36.	Խնձոր	100	Հատկացվում է օգոստոս-նոյեմբեր ամիսներին:
37.	Մուրաբա	20	Հատկացվում է հոկտեմբեր-ապրիլ ամիսներին:
38.	Օշարակ	31	
39.	Շոկոլադ	15	
40.	Վիտամին C	1	Հատկացվում է ապրիլի 15-ից մինչև հունիսի 15-ը:

1. Սույն չափաքանակների 39-րդ տողում նշված շոկոլադը հատկացվում է միայն թոփաքային ռեակտիվ, տուրբոռեակտիվ, տուրբոպտուտակային մեքենաների թոփաքային անձնակազմերին:

2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին սննդի տվյալ չափաքանակով ապահովվում են օդաչուական կազմի այն զինծառայողները, ովքեր ընդգրկված են թոփաքային սարքերի հաստիքային անձնակազմերում (այդ թվում՝ նրանց փոխարինողներին), ինչպես նաև օդաչուներ և շտուրմաններ պատրաստող ռազմաուսումնական հաստատությունների կուրսասնտներին՝ գործնական թոփաքներն սկսվելու օրվանից՝ համաձայն ուսումնական պլանի,

մինչև ուսումնական հաստատությունն ավարտելու օրը (այդ թվում՝ այլ զորամասերում թոփալային պրակտիկա և ստաժավորում անցկացնելու ընթացքում):

**N 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀՈՍՊԻՏԱԼԱՅԻՆ ՄՆՆԻՒՄ ՕՐԱԿԱՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ**

NN ը/կ	Անվանումը	Մեկ մարդուն օրական հասանելիք մթերքի քանակը (գրամ)	Ծանոթագրություն
1	2	3	4
1.	Հաց՝ ցորենի ալյուրից, 1-ին տեսակի	650	
2.	Ալյուր՝ ցորենի, 1-ին տեսակի	10	
3.	Ձավարեղեն՝ տարբեր	30	
4.	Սպիտակաձավար	20	
5.	Բրինձ	30	
6.	Մակարոնեղեն	40	
7.	Միս՝ տավարի, խոզի՝ ոսկրոտ	175	
8.	Միս՝ հավի	50	
9.	Ձուկ՝ սառեցված, առանց գլխի	100	
10.	Կենդանական ճարպ, մարգարին	20	
11.	Բուսական յուղ (ձեթ)	20	
12.	Կարագ՝ սերուցքային	30	
13.	Հալած պանիր	30	
14.	Խտացրած կաթ՝ շաքարով	80	
15.	Թթվասեր	80	
16.	Կաթնաշոռ	80	
17.	Հավի ձու	1 հատ (օրական)	
18.	Ջեմ	20	
19.	Շաքարավազ	60	
20.	Կերակրի աղ	20	
21.	Թեյ	1	
22.	Դափնու տերև	0,1	
23.	Պղպեղ՝ կարմիր	0,2	
24.	Պղպեղ՝ սև	0,2	
25.	Քաղախ	1	
26.	Տոմատի մածուկ	6	
27.	Կետչուպ	20	
28.	Կարտոֆիլ	600	
29.	Կաղամբ	130	
30.	Գազար	50	
31.	Բազուկ	30	
32.	Գլուխ սոխ	50	
33.	Օշարակ	28	
34.	Մարինադ	40	Հատկացվում է դեկտեմբեր-հունվար ամիսներին:
35.	Թարմ լոլիկ կամ վարունգ	40	Հատկացվում է հուլիս- սեպտեմբեր ամիսներին:
36.	Չորացրած կանաչի՝ տարբեր	0,5	
37.	Խնձոր	100	Հատկացվում է օգոստոս- նոյեմբեր ամիսներին:
38.	Մուրաբա	20	Հատկացվում է հոկտեմբեր-ապրիլ ամիսներին:

1	2	3	4
39.	Վիտամին C	1	Հատկացվում է ապրիլի 15-ից մինչև հունիսի 15-ը:
40.	Բնական սուրճ	1 գրամ	
41.	Թխվածքաբլիթ	30 գրամ	

1. Հասանելիք չափաքանակների սահմաններում մեկ զինծառայողի հաշվարկով հատկացվում է նաև կեսօրիկ՝ ժամը 12.00-12.30-ը, ստորև նշված չափաքանակներով՝

- | | |
|------------------|----------|
| 1) թթվասեր՝ | 40 գրամ. |
| 2) կաթնաշոռ՝ | 40 գրամ. |
| 3) խտացրած կաթ՝ | 20 գրամ. |
| 4) բնական սուրճ՝ | 1 գրամ. |
| 5) թխվածքաբլիթ՝ | 30 գրամ: |

2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին սննդի տվյալ չափաքանակով ապահովվում են՝

1) զինվորական հոսպիտալներ բուժման մեկնող զինծառայողները (սպայական, ենթասպայական ու շարքային կազմերի պարտադիր և պայմանագրային զինծառայողներ), ովքեր պարենային ապահովման համար հաշվառվում են գործամասի տված պարենային վկայականի հիման վրա, իսկ արտակարգ դեպքերում՝ հոսպիտալի պետի հրամանով, սակայն երկու օրվա ընթացքում պետք է ներկայացնեն պարենային վկայականը: Զինված ուժերի սպայական, ենթասպայական և շարքային կազմի հիվանդ զինծառայողները, աշխատողները, զինծառայողների ընտանիքների անդամները, պատերազմի մասնակիցները, հաշմանդամները, գոհված ազատամարտիկների ընտանիքների անդամները, զինվորական կենսաթոշակառուները սննդով ապահովվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ անվճար, հոսպիտալային չափաքանակներով (N 4 չափաքանակներ և հիվանդ զինծառայողներին ըստ հիվանդության հատկացվող լրացուցիչ սննդամթերք):

2) ճառագայթահարված և այրվածքային վնասվածքներով հիվանդներին, բացի N 4 չափաքանակներից, լրացուցիչ հատկացվում են՝

- | | |
|-------------------------------------|-----------|
| ա. միս՝ տավարի, խոզի՝ ոսկրոտ՝ | 50 գրամ, |
| բ. կիսաապխտած կամ ապխտած երշիկեղեն՝ | 20 գրամ, |
| գ. մսի պահածո՝ | 50 գրամ, |
| դ. ձուկ՝ սառեցված, առանց գլխի՝ | 30 գրամ, |
| ե. թթվասեր՝ | 10 գրամ, |
| զ. կաթնաշոռ՝ | 120 գրամ, |
| է. հալած պանիր՝ | 20 գրամ, |
| ը. օշարակ՝ | 28 գրամ, |
| թ. բնական սուրճ՝ | 0,5 գրամ. |

3) երիկամային հիվանդություններով տառապող զինծառայողները, ովքեր գտնվում են հոսպիտալներում, ապահովվում են սննդամթերքի հետևյալ չափաքանակներով՝

ա. հաց՝ ցորենի ալյուրից, 1-ին տեսակի՝	300 գրամ,
բ. ձավարեղեն և մակարոնեղեն՝	100 գրամ,
գ. միս՝ տավարի, խոզի՝ ոսկրոտ՝	100 գրամ,
դ. ձուկ՝ սառեցված, առանց զլխի՝	100 գրամ,
ե. կարագ՝ սերուցքային՝	60 գրամ,
զ. խտացրած կաթ՝	80 գրամ,
է. հավի ձու՝	1 հատ,
ը. շաքարավազ՝	100 գրամ,
թ. թեյ՝	1 գրամ,
ժ. կարտոֆիլ՝	700 գրամ,
ժա. բանջարեղեն՝	300 գրամ,
ժբ. արևածաղկի ձեթ՝	50 գրամ,
ժգ. թթվասեր՝	35 գրամ,
ժդ. կաթնաշոռ՝	100 գրամ,
ժե. օշարակ՝	28 գրամ,
ժզ. խնձոր՝	200 գրամ.

4) տուբերկույրոգով հիվանդներին տրվում են՝

ա. հաց՝ ցորենի ալյուրից, 1-ին տեսակի՝	435 գրամ,
բ. ալյուր՝ ցորենի, 1-ին տեսակի՝	75 գրամ,
գ. ձավարեղեն և մակարոնեղեն՝	75 գրամ,
դ. միս՝ հավի՝	100 գրամ,
ե. ձուկ՝ սառեցված, առանց զլխի՝	100 գրամ,
զ. կարագ՝ սերուցքային՝	60 գրամ,
է. կերակրի աղ՝	10 գրամ,
ը. խտացրած կաթ՝	60 գրամ,
թ. շաքարավազ՝	20 գրամ,
ժ. շոկոլադ՝	50 գրամ,
ժա. թեյ՝	1 գրամ,
ժբ. կարտոֆիլ՝	400 գրամ,
ժգ. բանջարեղեն՝	500 գրամ,
ժդ. թթվասեր՝	30 գրամ,
ժե. կաթնաշոռ՝	70 գրամ,
ժզ. տոմատի մածուկ՝	6 գրամ,

ժէ. խնձոր՝	200 գրամ,
ժը. հալած պանիր՝	15 գրամ,
ժթ. արևածաղկի ձեթ՝	25 գրամ,
ի. կիսաապխտած կամ ապխտած երշիկեղեն՝	30 գրամ,
իա. բնական սուրճ	3 գրամ,
իբ. միս՝ տավարի, խոզի՝ ոսկրոտ՝	100 գրամ,
իգ. հավի ձու (օրական)՝	1 հատ:

**N 5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԻ ՍԱՆԵՐԻ ՄՆՆԴԻ ՕՐԱԿԱՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ**

NN ը/կ	Անվանումը	Մեկ մարդուն օրական հասանելիք մթերքի քանակը (գրամ)	Ծանոթագրություն
1	2	3	4
1.	Հաց՝ ցորենի ալյուրից, 1-ին տեսակի	700	
2.	Թխվածքարիթ	45	
3.	Ալյուր՝ ցորենի, 1-ին տեսակի	10	
4.	Զավարեղեն՝ տաքբեր	60	
5.	Սպիտակաձավար	20	
6.	Բրինձ	40	
7.	Մակարոնեղեն	40	
8.	Միս՝ ոսկրոտ	170	
9.	Կիսաապխտած կամ ապխտած երշիկեղեն	40	
10.	Զուկ՝ սառեցված, առանց գլխի	100	
11.	Կենդանական ճարպ, մարգարին	20	
12.	Բուսական յուղ (ձեթ)	20	
13.	Կարագ՝ սերուցքային	30	
14.	Հալած պանիր	30	
15.	Խտացրած կաթ՝ շաքարով	20	
16.	Թթվասեր	40	
17.	Կաթնաշոռ	50	
18.	Հավի ձու (շաքարվա ընթացքում)	4 հատ	
19.	Թարմ խնձոր	100	
20.	Շաքարավազ	60	
21.	Կերակրի աղ	20	
22.	Թեյ	1	
23.	Դափնու տերև	0,1	
24.	Պղպեղ՝ կարմիր	0,2	
25.	Պղպեղ՝ սև	0,2	
26.	Քացախ	1	
27.	Տոմատի մածուկ	6	
28.	Կետչուպ	20	
29.	Կարտոֆիլ	600	
30.	Կաղամբ	130	
31.	Գազար	50	
32.	Բազուկ	30	
33.	Գլուխ սոխ	50	

1	2	3	4
34.	Օշարակ	28	
35.	Մարինադ	40	Հատկացվում է դեկտեմբեր-հունվար ամիսներին:
36.	Թարմ լոլիկ կամ վարունգ	40	Հատկացվում է հուլիս-սեպտեմբեր ամիսներին:
37.	Չորացրած կանաչի՝ տարբեր	0.5	
38.	Մուրաբա	20	Հատկացվում է հոկտեմբեր-ապրիլ ամիսներին:
39.	Վիտամին C	1	Հատկացվում է ապրիլի 15-ից մինչև հունիսի 15-ը:

**N 6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ՄԱՐՏԱԿԱՆ
ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՄՆԵՂԻ ՕՐԱԿԱՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ**

NN ը/կ	Անվանումը	Մեկ մարդուն օրական հասանելիք մթերքի քանակը (գրամ)	Ծանոթագրություն
1	2	3	4
1.	Հաց՝ ցորենի ալյուրից, 1-ին տեսակի	650	
2.	Թխվածքաբլիթ	60	
3.	Արագ պատրաստվող կիսաֆարփկատ (1-ին ճաշատեսակի համար)	60	
4.	Մսի պահածո	125	
5.	Կիսաապխտած կամ ապխտած երշիկեղեն	40	
6.	Ճարպ (սալ)	20	
7.	Մսաբուսական պահածո՝ տարբեր	300	
8.	Պահածոյացրած 2-րդ ճաշատեսակներ (բանջարեղենի ռազո)	150	
9.	Կարագ՝ սերուցքային	20	
10.	Հալած պանիր	30	
11.	Խտացրած կաթ՝ շաքարով	50	
12.	Հալի ձու՝ շաքարական, հատ	4	
13.	Շաքարավազ	70	
14.	Կերակրի աղ	10	
15.	Կետչուպ	20	
16.	Մարինադ	40	Հատկացվում է մայիս-հոկտեմբեր ամիսներին:
17.	Պահածոյացված լոլիկ	40	Հատկացվում է նոյեմբեր-ապրիլ ամիսներին:
18.	Թարմ լոլիկ կամ վարունգ	40	Հատկացվում է հուլիս-սեպտեմբեր ամիսներին:
19.	Խավիար	50	
20.	Թեյ	1.5	Հատկացվում է նոյեմբեր-ապրիլ ամիսներին:
		1	Հատկացվում է մայիս-հոկտեմբեր ամիսներին:
21.	Օշարակ	28	

1	2	3	4
22.	Խնձոր	100	Հատկացվում է օգոստոս-նոյեմբեր ամիսներին:
23.	Կոնֆետ՝ կարամել	30	
24.	Ջելմ	30	
25.	Մուրաբա	20	Հատկացվում է հոկտեմբեր-ապրիլ ամիսներին:
26.	Բնական սուրճ	6	
27.	Ծխախոտ՝ գտիչով	20 գլանակ	

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին սննդի սույն չափաքանակներով ապահովվում են՝

1) զինված ուժերի այն անձնակազմերը, որոնք ջոկի հենակետերում ներգրավված են պետական սահմանի պահպանության գործում.

2) սպայական, ենթասպայական և շարքային կազմի պայմանագրային զինծառայողները՝ ոչ ավելի, քան համաձայն Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի համապատասխան հրամանով հաստատված թվի.

3) սույն չափաքանակի 27-րդ կետում նախատեսված ծխախոտը հատկացվում է միայն պայմանագրային զինվորական ծառայության կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողներին:

2. Անձնակազմին սույն չափաքանակներով սնունդը հատկացվում է պետական սահմանում մարտական հերթապահության մեջ ընդգրկված ամբողջ ժամանակահատվածում:

3. Ծովի մակերևույթից 2000 մետր և ավելի բարձր տեղաբաշխված ջոկերի հենակետերի անձնակազմերին, բացի N 6 չափաքանակներից, լրացուցիչ հատկացվում են՝

1) կիսաապխտած կամ ապխտած երշիկեղեն՝ 40 գրամ.

2) խտացրած կաթ՝ շաքարով՝ 20 գրամ:

4. Ծովի մակերևույթից 2500 մետր և ավելի բարձր տեղաբաշխված ջոկերի հենակետերի անձնակազմերին, բացի N 6 չափաքանակներից, լրացուցիչ հատկացվում է 50 գրամ ճարպ (սալ):

5. Ջինված ուժերում տոնական օրեր համարել հունվարի 1-ը, հունվարի 28-ը, մայիսի 9-ը, մայիսի 28-ը, սեպտեմբերի 2-ը (պաշտպանության բանակի զորամասերի համար), սեպտեմբերի 21-ը, երդման արարողության օրերը, և NN 1, 2, 3, 4, 5 և 6 չափաքանակներով այդ օրերին, մեկ զինծառայողի հաշվով, լրացուցիչ հատկացվում են՝

1) հունվարի 28-ին, մայիսի 9-ին, մայիսի 28-ին, սեպտեմբերի 2-ին (պաշտպանության բանակի զորամասերի համար), սեպտեմբերի 21-ին, երդման արարողության և զորամասերի կազմավորման օրերին՝

ա. հավի ձու՝

1 հատ,

բ. թխվածքաբլիթ՝

60 գրամ,

գ. շոկոլադե՝	50 գրամ,
դ. ջեմ՝	45 գ.
2) հունվարի 1-ին (Ամանորին)՝	
ա. խնձոր՝	200 գրամ,
բ. մանդարին՝	200 գրամ,
գ. թխվածքաբլիթ՝	60 գրամ,
դ. շոկոլադե՝	50 գրամ,
ե. բաստուրմա՝	20 գրամ,
զ. սուջուխ՝	10 գրամ,
է. ճարպ (սալ)՝	30 գրամ,
ը. խոզապուխտ (վետչինա)՝	50 գրամ,
թ. միս՝ ոսկրոտ՝	300 գրամ,
ժ. գազավորված ըմպելիք (կոկա-կոլա, ֆանտա, սփրայթ)	200 գրամ:

Ն 7. ԶՈՐՔԵՐԻ ԱՄԵՆՕՐՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄԹԵՐՔԻ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՕՐԱԿԱՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ

Ա. Չոր օրապահիկը հավաքածուով հատկացնելու ժամանակ ապահովել՝

NN ը/կ	Անվանումը	Մեկ մարդուն օրական հասանելիք մթերքի քանակը (գրամ)
1.	Հաց՝ 1-ին տեսակի	470
2.	Շաքարավազ՝ անհատական փաթեթ	90
3.	Մսաբուսական պահածո	600
4.	Մսի պահածո	350
5.	Թեյ	3
6.	Ջեմ	45

Բ. Ջրամեկուսիչ թաղանթով, ստվարաթղթե արկղով համագորային չոր օրապահիկ (N 1 օրաքաժին)
հատկացնելու ժամանակ ապահովել՝

NN ը/կ	Անվանումը	Մեկ մարդուն օրական հասանելիք մթերքի քանակը (գրամ)
1	2	3
1.	Գալետ	200
2.	Մսի պահածո	300
3.	Մսաբուսական պահածո՝ տարբեր	500
4.	Շաքարավազ	90
5.	Թեյ	3
6.	Սև, ադազած պղպեղ	1
7.	Կերակրի աղ	5

1	2	3
8.	Չոր սպիրտ	3 հատ
9.	Գդալ՝ մեկանգամյա օգտագործման	3 հատ
10.	Անձեռոցիկ	3 հատ

Գ. Ջրամեկուսիչ թաղանթով, սովաբաթղթե արկղով հատուկ ստորաբաժանումների համար նախատեսված չոր օրապահիկ (N 2 օրաբաժին) հատկացնելու ժամանակ ապահովել՝

NN ը/կ	Անվանումը	Մեկ մարդուն օրական հասանելիք մթերքի քանակը (գրամ)
1.	Գալետ	200
2.	Մսի պահածո	300
3.	Մսաբուսական պահածո՝ տարբեր	500
4.	Շաքարավազ	90
5.	Թեյ	3
6.	Լուծվող սուրճ	2
7.	Թարմացնող ըմպելիք	30
8.	Սև, ադացած պղպեղ	1
9.	Կերակրի աղ	5
10.	Պովիդոլ	45
11.	Լուցկի՝ ջրադիմացկուն և քամիադիմացկուն	6 հատ
12.	Չոր սպիրտ	3 հատ
13.	Գդալ՝ մեկանգամյա օգտագործման	3 հատ
14.	Անձեռոցիկ	3 հատ

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին սննդի տվյալ չափաքանակով ապահովվում են՝

1) զինված ուժերի անձնակազմը՝ ամենօրյա գործունեության ժամանակ, երբ տաք սննդի պատրաստումը NN 1, 2, 3 և 5 չափաքանակներով անհնարին է.

2) զինվորական բեռների պահպանման, պաշտպանության և ուղեկցման խնդիրներ իրականացնող անձնակազմը.

3) հատուկ նշանակության ստորաբաժանումների զինծառայողները, ովքեր հատուկ ուսումնական կենտրոններում անցնում են կենսակայունության գործնական պարապմունքներ:

2. Նշված բոլոր դեպքերում անձնակազմին տվյալ չափաքանակով սննդի անընդմեջ հատկացումը չի կարող գերազանցել 3 օրը (բացառությամբ հատուկ նշանակության խմբերի՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զլխավոր շտաբի պետի հրամանով առաջադրանք կատարելու դեպքում):

N 9. ՀՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՇՆԵՐԻ ԿԵՐԱԿՐՄԱՆ ՕՐԱԿԱՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ

NN ը/կ	Անվանումը	Մեկ օրում մեկ շան համար նախատեսված կերի քանակը (գրամ)	
		հասունացած շների համար	մինչև 4 ամսական շների համար
1.	Վարսակաձավար, կորեկաձավար	600	40-300
2.	Միս՝ 2-րդ կարգի, կամ ենթամթերք՝ 2-րդ կարգի	400	20-200
		1 000	40-500
3.	Կենդանական յուղ	13	10
4.	Կաթ՝ կովի	-	150-500
5.	Կարտոֆիլ, բանջարեղեն	300	100
6.	Կերակրի աղ	15	3-10

1. Մինչև 4 ամսական շան ձագերին ամենօրյա հավասարաչափ ավելացմամբ հատկացվում են՝

1) վարսակաձավար, կորեկաձավար՝ սկսած 40 գ.՝ 3 շաբաթական հասակից.

2) միս՝ 2-րդ կարգի, կամ ենթամթերք՝ 2-րդ կարգի՝ սկսած 20 գ՝ 1 ամսական հասակից.

3) կաթ՝ սկսած 150 գ՝ 2 շաբաթական հասակից:

2. Ցեղական շների համար տվյալ չափաքանակներով լրացուցիչ հատկացվում են 50 գրամ միս՝ 2-րդ կարգի, կամ 125 գրամ ենթամթերք՝ 2-րդ կարգի՝ մեկ օրում մեկ շան համար:

3. Հիվանդ շներին անասնաբուժական ծառայության մասնագետների եզրակացության հիման վրա թույլատրվում է 200 գրամ վարսակաձավարի կամ կորեկաձավարի փոխարեն հատկացնել նույն քանակությամբ բրինձ:

4. Անասնաբուժական ծառայության մասնագետների եզրակացության հիման վրա թույլատրվում է յուրաքանչյուր շանը մեկ օրվա համար լրացուցիչ հատկացնել՝

1) հիվանդ շների համար՝ կաթ՝ 500 գրամ.

2) հղիացած էգ շների համար՝ միս՝ 2-րդ կարգի՝ 100 գրամ.

կամ ենթամթերք՝ 2-րդ կարգի՝ 250 գրամ.

3) կերակրող էգ շների համար՝ միս՝ 2-րդ կարգի՝ 100 գրամ.

կամ ենթամթերք՝ 2-րդ կարգի՝ 250 գրամ.

4) կաթ՝ 500 գրամ:

N 10. ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ

NN ը/կ	Անվանումը	Փոխարինվող սննդամթերքի քանակը (գրամ)	Փոխարինող սննդամթերքի քանակը (գրամ)	Բացի դրանից՝ փոխարինել հետևյալ կետերով
1	2	3	4	5
1.	Հացը՝ թեփահան աշորայի ալյուրից՝ փոխարինել պաքսիմատով՝ 1-ին տեսակի	100	60	

1	2	3	4	5
	<p>հացով՝ ցորենի ալյուրից, 1-ին տեսակի</p> <p>հացով՝ ցորենի, 2-րդ տեսակի</p> <p>ցորենի ալյուրով՝ 1-ին տեսակի</p> <p>թեփահան աշորայի ալյուրով</p> <p>չոր հացով</p>		<p>90</p> <p>95</p> <p>28</p> <p>42</p> <p>80</p>	<p></p> <p>2</p> <p>2</p> <p></p> <p></p>
2.	<p>Հացը՝ սպիտակ ցորենի ալյուրից, 1-ին տեսակի՝ փոխարինել</p> <p>պաքսիմատով՝ ցորենի ալյուրից, 1-ին տեսակի ալյուրով՝ 1-ին տեսակի ցորենից</p> <p>հասարակ բատոններով՝ ցորենի 1-ին տեսակի ալյուրից</p> <p>հացով՝ ցորենի բարձր տեսակի ալյուրից</p> <p>հացով՝ ցորենի 2-րդ տեսակի ալյուրից</p> <p>հասարակ գալետներով՝ 1-ին տեսակի ցորենի ալյուրից</p> <p>վաֆլիով</p>	100	<p>65</p> <p>75</p> <p>95</p> <p>85</p> <p>105</p> <p>65</p> <p>55</p>	<p></p> <p></p> <p></p> <p>1</p> <p>20</p> <p>18</p>
3.	<p>Ցորենի ալյուրը՝ 1-ին տեսակի՝ փոխարինել</p> <p>բրնձով</p> <p>մակարոնեղենով</p> <p>սպիտակաձավարով</p> <p>ալյուրով՝ ցորենի բարձր տեսակի</p>	100	<p>100</p> <p>100</p> <p>100</p> <p>85</p>	<p>4</p> <p>4</p> <p></p> <p></p>
4.	<p>Տարբեր ձավարեղենը՝ փոխարինել</p> <p>եփման կարիք չզգացող ձավարեղենով</p> <p>բրնձով</p> <p>մակարոնեղենով</p> <p>կոնցենտրացված ձավարեղենով</p> <p>ցորենի ալյուրով՝ 2-րդ տեսակի</p> <p>թարմ կարտոֆիլով</p> <p>բնական կարտոֆիլով՝ կիսաֆաբրիկատ, պահածոյացված</p> <p>թարմ բանջարեղենով</p> <p>թթու կամ աղ դրած բանջարեղենով</p> <p>կարտոֆիլով և բանջարեղենով՝ չորացրած, կարտոֆիլի ալյուրով՝ չորացրած, բանջարեղենի պահածոյով և մարինացված պահածոյով</p> <p>1-ին տեսակի բանջարեղենի պահածոյով՝ առանց մսի</p> <p>բանջարեղենի պահածոներով՝ լիցքավորող</p> <p>խորտիկային</p> <p>արագ պատրաստվող կիսաֆաբրիկատներով</p>	100	<p>100</p> <p>100</p> <p>100</p> <p>100</p> <p>100</p> <p>500</p> <p>500</p> <p>500</p> <p>500</p> <p>500</p> <p>100</p> <p>500</p> <p>375</p> <p>250</p> <p>375</p> <p>100</p>	<p></p> <p>3</p> <p>3</p> <p></p> <p>5</p> <p></p> <p>5</p> <p>5</p> <p>5</p> <p></p> <p></p> <p></p> <p>10.23</p>
5.	<p>Կարտոֆիլը, թարմ բանջարեղենը, թթու կամ աղ դրած բանջարեղենը՝ փոխարինել</p> <p>գլուխ սոխով</p> <p>չորացրած սոխով</p> <p>կանաչ սոխով</p> <p>սխտորով</p>	100	<p>50</p> <p>5</p> <p>100</p> <p>25</p>	<p>4</p> <p></p> <p></p> <p>6</p>

1	2	3	4	5
6.	Մոխր՝ փոխարինել սխտորով կարտոֆիլով և բանջարեղենով	100	50 200	5 5
7.	Խտացրած թթխմորը՝ փոխարինել չորացրած թթխմորով	100	50	
8.	Միսը՝ խոզի, տավարի, ոչխարի՝ ոսկրոտ փոխարինել մսով՝ առանց ոսկորի ենթամթերքով՝ 1-ին կարգի ենթամթերքով՝ 2-րդ կարգի հավի մսով՝ մաքրած հավի մսով՝ կիսամաքրած և չմաքրած հավի ազդրամսով չորացրած մսով երշիկով՝ եփած, և նրբերշիկով ծխեցրած մսով (կիսաապխտած երշիկ, խոզապուխտ) տարբեր տեսակի մսի պահածոյով պահածոյով՝ թռչնի մսից՝ ոսկորներով ձկով՝ առանց գլխի (սառեցրած և աղ դրած) տարբեր տեսակի ձկան պահածոյով գլուխ պանրով՝ պինդ պանրով՝ հալեցրած հավի ձվով, հատ խտացրած կաթով՝ շաքարով	100	80 100 300 100 120 100 33 80 60 75 100 150 120 48 72 2 80	9 9 10.16 10 9.16 16 13.16
9.	Երշիկը՝ հում, ապխտած՝ փոխարինել եփած երշիկով ծխեցրած մսով (կիսաապխտած երշիկ, խոզապուխտ) գլուխ պանրով՝ պինդ	100	265 200 160	8 8 8.16
10	Ձուկը՝ մաքրած, առանց գլխի (սառեցրած և աղ դրած)՝ փոխարինել սելդով՝ աղ դրած և ապխտած գլխով բոլոր տեսակի ձկներով՝ գլխով ձկան ֆիլեով չորացրած ձկով տարբեր տեսակի ձկան պահածոներով բանջարեղենի պահածոյով՝ խորտիկային ապխտած ձկով խտացրած կաթով՝ շաքարով թթվասերով հալած պանրով մսով՝ խոզի, տավարի, ոչխարի	100	100 130 70 33 80 120 75 33.2 33.2 30 67	8 4.23
11.	Կարագը՝ փոխարինել ստերիլիզացված, պահածոյացված կարագով չոր կարագի կոնցենտրատով խտացրած կաթով՝ շաքարով	100	100 70 400	12.13.16

1	2	3	4	5
12.	Կենդանական յուղը՝ հալեցրած, մարգարին՝ փոխարինել կարագով բուսական յուղով ճարպով՝ հումք սալով	100	67 100 130 100	16
13.	Պանիրը՝ փոխարինել կարագով թթվասերով կաթնաշոռով կաթով խտացրած կաթով՝ շաքարով հավի ձվով հալած պանրով մսով՝ թռչնի	100	40 166 250 825 165 4 հատ 150 137.5	16 15 16 13.14.15.16 8.16
14.	Թթվասերը՝ փոխարինել խտացրած կաթով՝ շաքարով չոր կաթով կաթով	100	100 75 500	13.15.16 16
15.	Կաթնաշոռը՝ փոխարինել խտացրած կաթով՝ շաքարով չոր կաթով կաթով պանրով	100	67 50 334 40	13.14.16 16 13
16.	Կովի կաթը՝ փոխարինել չորացրած կաթով, չորացրած մածնով, թթու կաթնամթերքով՝ չորացրած խտացրած կաթով՝ շաքարով խտացրած կաթով՝ ստերիլիզացված, առանց շաքարի բնական սուրճով և կակաոյով՝ խտացրած կաթով և շաքարով թթու կաթնամթերքով (մածուն) կաթի սերով թթվասերով չոր թթվասերով կաթնաշոռով կարագով հալեցրած կարագով գլուխ պանրով՝ պինդ պանրով՝ հալեցրած հավի ձվով խտացրած կաթի սերով՝ շաքարով «Բրինձա» պանրով ձկով՝ առանց գլխի	100	15 20 30 20 100 20 20 10 30 5 5 12 18 0,5 հատ 20 24 60	13.14.15
17.	Հավի ձուն՝ փոխարինել	1 հատ		8.13.16

1	2	3	4	5
	ձվի փոշիով ձվի մեղանժով պանրով՝ հալեցրած թոչնի մսով՝ կիսամաքրած և չմաքրած խտացրած կաթով՝ շաքարով		15 50 33 60 36.3	8.13.15.16
18.	Շաքարավազը՝ փոխարինել կարամելով մուրաբայով, ջեմով, պովիդոլով մարմելադով թխվածքաբլիթով վաֆլիով հավայով խտացրած կաթով՝ շաքարով շաքարով	100	50 140 130 100 100 120 75 100	22 20 2.20 19
19.	Շոկոլադը՝ փոխարինել կարամելով բնական սուրճով և կակաոյով՝ խտացրած կաթով և շաքարով բնական սուրճով մեղրով քաղցր սալիկով հավայով շաքարով ջեմով	100	100 200 150 165 160 150 180 40	26 18
20.	Թխվածքաբլիթը՝ փոխարինել հասարակ գալետներով՝ 1-ին տեսակի ցորենի ալյուրից վաֆլիով շաքարավազով	100	100 85 100	2 2 18
21.	Տոմատի մածուկը՝ փոխարինել տոմատի պյուրեով տոմատի սոուսներով տոմատի փոշիով, կծու սոուսներով տոմատի հյութով, թարմ պոմիդորով կետչուպով	100	200 100 33 500 150	
22.	Թարմ միրգը՝ փոխարինել թարմ հատապտուղներով, նարինջով, մանդարինով ձմերուկով սելսով չոր մրգով չորացրած մրգով և հատապտուղով պահածոյացված կոմպոտով պտղային և հատապտղային բնական հյութերով ըմպելիքով՝ մրգային	100	100 300 300 20 20 50 100 130	24 23

1	2	3	4	5
	չորացրած հյութերով էքստրատներ՝ մրգապտղային մուրաբայով, ջեմով, պովիդոլով կիսելի կոնցենտրատով հյութով՝ բնական կամ գազավորված		18 10 17 30 150	18 25,29
23.	Մրգային և հատապտղային հյութերը՝ փոխարինել բանջարեղենի պահածոյով՝ խորտիկային կիտրոնի թթուով և շաքարով տոմատի հյութով, բանջարեղենի հյութով կովի կաթով հյութով՝ բնական կամ գազավորված	100	50 0,5 15 300 100 150	22 4,10 16 24
24.	Օշարակը՝ փոխարինել հյութով կոմպոտով թելով և շաքարավազով	28	200 200 0,5 10	
25.	Հյութը՝ բնական՝ փոխարինել կոմպոտով օշարակով	100	100 14	
26.	Չորացրած մրգերը՝ փոխարինել շաքարով և թելով ձմերուկով սելխով հյութով՝ բնական կամ գազավորված հյութով՝ բնական օշարակով	100	75 3 1500 1000 1500 1000 140	22,25
27.	Կիսելի կոնցենտրատը՝ փոխարինել շաքարով և թելով չորացրած մրգերով	100	50 2 67	22,29
28.	Բնական սուրճը՝ փոխարինել լուծվող սուրճով սրճային ըմպելիքով կակաոյի փոշիով սև թելով՝ 1-ին տեսակի	100	40 200 100 25	19 19 27
29.	Թելը՝ փոխարինել լուծվող թելով սրճային ըմպելիքով	100	80 800	26 26
30.	Մանանեխի փոշին՝ փոխարինել պատրաստի մանանեխով	100	600	

1	2	3	4	5
31.	Կարտոֆիլի օսլան՝ փոխարինել կիսելի կոնցենտրատով թարմ կարտոֆիլով	100	100 500	22,25 4,5
32.	Քացալար՝ սպիրտային, բնական՝ փոխարինել քացախի էսենցիայով	100	5	
33.	Սիգարետը՝ 5, 6, 7-րդ կարգի՝ փոխարինել 5-րդ կարգի ծխախոտով	20 հատ	20 հատ	
34.	Ծխախոտը՝ առանց գոիչի՝ փոխարինել ծխախոտով՝ գոիչով	20 հատ	20 հատ	
35.	Մսի պահածոն՝ տարբեր՝ փոխարինել մսաբուսական պահածոյով պահածոյացրած 2-րդ ճաշատեսակներով (բանջարեղենի ռազու)	250	500 500	
36.	Մսաբուսական պահածոն՝ փոխարինել պահածոյացրած 2-րդ ճաշատեսակներով (բանջարեղենի ռազու)	100	100	

1. Սույն չափաքանակների 12-րդ տողում նշված կարագի փոխարինումը թույլատրվում է միայն դիետիկ սնունդը կազմակերպելու ժամանակ:

N 11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺՄԱՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ
ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ

NN ը/կ	Անվանումը	Փոխարինվող սննդամթերքի քանակը (գրամ)	Փոխարինող սննդամթերքի քանակը (գրամ)
1.	Կարագը՝ փոխարինել սալով	100	100
2.	Հավի ձուն՝ փոխարինել հացով՝ 1-ին տեսակի ալյուրից	1 հատ	120
3.	Տոմատի մածուկը՝ փոխարինել սոխով զազարով	100	250 350
4.	Մրգային և հատապտղային հյութերը՝ փոխարինել թարմ, թթու դրած, աղ դրած բանջարեղենով	100	200

**N 12. ԾԱԽՍՎԱԾ ՄԵԿ ՉԱՓԱԲԱԺԻՆ ՃԱՇԱՏԵՍԱԿԻ ԴԻՄԱՑ ՊԱՀՎՈՂ
ՄԹԵՐԲՆԵՐԻ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ**

1. Պահածոյացված ճաշատեսակներ, կիսաֆարրիկատներ.

NN ը/կ	Պահածոներ, կիսաֆարրիկատներ	Պահվող մթերքների քանակը (գրամ)			Բացի դրանից՝ փոխարինել հետևյալ կետերով
		միս	ձավարեղեն, այլուր և բանջարեղեն՝ ձավարեղենի հաշվարկով	կենդանական յուղ, մարգարին	
1.	Մսաբուսական պահածո՝ տարբեր, 265 գրամ	100	86	12.5	
2.	Արագ պատրաստվող կիսաֆարրիկատ, 60 գրամ	-	60	-	3,4
3.	Պահածոյացրած 1-ին ճաշատեսակներ, 550 գրամ	65	86	12.5	2,4
4.	Արագ պատրաստվող սուպեր, 150 գրամ	-	60	-	2,3

2. Հաստիքային ծառայողական շների համար չոր կեր.

Չոր կերի անվանումը և քանակը	Պահվող մթերքների քանակը (գրամ)				
	միս	վարսակաձավար, կորեկաձավար	կենդանական յուղ, մարգարին	կարտոֆիլ և բանջարեղեն	կերակրի աղ
1. Հասունացած շների համար (քաշը՝ սկսած 24 կգ)					
«Պեդիգրի», «Չապլի», «Բեսթ ին Շոու», 600 գրամ	400	600	13	300	15
2. Ցեղական շների համար (քաշը՝ սկսած 24 կգ)					
